

դանական թագաւորութիւնն է, միւսը—բուսական թագաւորութիւնը:

ՄԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆ

(Պը շարունակով)

### ԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՆԻՎ

Շարպանտիէ և Բլոնդլօ, որոնք ապացուցեցին, թէ մարդու մարմինը արձակում է առանձին տեսակ ճառագայթներ, այժմ էլ շարունակում են այս հարցի ուսումնասիրութիւնը \*): Այս գիւտի էութիւնը նրանում է, որ մարդու մարմինը միշտ, ևս առաւել երբ մարդ գրգռուած է, արձակում է ճառագայթներ, որոնցից Ֆոսֆորացուող մարմինն սկսում է լոյս տալ:

Շարպանտիէն գտել է, որ այդ ճառագայթներն ունին երկու բևեռներ—դրական և բացասական, և որ նրանցից մէկի կամ միւսի առաջ դալը և զարգանալը կախուած է մարդու գրգռուելու միջոցներից և տեսակից: Հետաքրքիր է օրին., որ յդի կանայք, որոնք պէտք է տղայ-երեխայ ծնեն, արձակում են բացասական, իսկ աղջիկ ունեցողները դրական ճառագայթներ: 120 տեսած դէպքերից միայն երկուսը չեն համապատասխանել վերոյիշեալ օրէնքին, այդ էլ պէտք է բացատրել նրանով, որ այս երկու դէպքում էլ Շարպանտիէն գործ է ունեցել յղութեան սկզբնական շրջանի հետ, երբ դեռ սեռը լաւ որոշուած չէ լինում:

\*

Վիեննայի բժիշկների ընկերութեան վերջին նիստում դոկտոր Պիգամ արել է հետաքրքիր զեկուցում ծննդկանութեան շերմախտը (родильная горячка) պրոֆ. Պալ'տաուֆի շինած շիճուկով բժշկելու մասին:

Յայտնի է, որ այս վտանգաւոր հիւանդութիւնն առաջացնում են մի տեսակ բակտերիաներ (ստրիպտոկոկներ): Երբ պարզուեց հիւանդութեան պատճառը, գիտնականներն սկսեցին

\*) Այս հարցին նուիրուած մեր աշխատակից պ. Մ. Նալբանդեանի յօդուածը կը տպագրուի յաջորդ համարում:

շիճուկ պատրաստել այդ ցաւը բժշկելու համար: Դեռ 1895 թ. դ-ր Մարմորիկ պատրաստեց մի շիճուկ, բայց փորձերը ցոյց տուին նրա անպէտքութիւնը, և միայն այժմ պրոֆ. Սրբակի կլինիկայում, որտեղ բանում է և Պիգամը, մի տարուայ փորձերից յետոյ եկան այն եզրակացութեան, որ պրոֆ. Պալտատուֆի շիճուկի միջոցով կարելի է բժշկել ծննդկանութեան ջերմախտը: Այս տեսակ բժշկուած 25 հիւանդներէց 11-ը, այսինքն 44%, առողջացել է:

\*

Բաղիումի անհամար թանկագին յատկութիւններին աւելացաւ և մէկը, այն է՝ օձի թոյնի թունաւորութիւնը ոչնչացնել: Օձի չորացրած և խորոֆորմի մէջ լուծած թոյնը ածել են չորս աման և դրանցից երեքը ենթարկել բաղիումի ճառագայթներին. մէկը 6, միւսը 20, երրորդը 58 ժամ, իսկ չորրորդը բոլորովին չի ենթարկուել այդ ճառագայթներին: Յետոյ այդ ամանների ամեն մէկից վերցրել են թոյն և սրակել ծովային խոզուկների վրայ: Բաղիումի ճառագայթների տակ 58 ժամ եղած թոյնը ոչ մի ազդեցութիւն չի ունեցել, 20 և 6 ժամ եղածները առաջ են բերել մի քիչ տկարութիւն, իսկ այդ ճառագայթներին բոլորովին չ'ենթարկուածը մահացու է եղել: Այսպիսով ուրեմն բաղիումը կարող է մեծ դեր խաղալ և՛ օձի կծածը բժշկելու մէջ, միայն հարցը նրա գործածութեան յարմար ձևի գտնելունն է:

\*

Կարլսբադում գոկաոր Աւգուստ Հերման և ինժեներ-քիմիկոս Պեզինդորֆեր պարապելով այդտեղի հանքային ջրերի քննութիւնում գտել են, որ այդ ջրերից գոյացող գազերը ունին բաղիումի յատկութիւններ: Այս հարցի մանրամասն ուսումնասիրութիւնը յանձնուած է պրոֆ. Լիւդվիգին:

\*

Ամերիկական թերթերը հաղորդում են, որ մի պրոֆեսորի աջողուել է բնետգնի ճառագայթներով սպիտակացնել մի նեզրի:

\*

Անթել հեռագրի այժմեան դրութեան մասին Մարկոնի հաղորդում է հետևեալը. առայժմ անթել հեռագրի ամենանշանաւոր կայարանը գտնուում է Բարիում Ադրիատիկ ծովի վրայ: Այստեղից հաղորդակցութիւն կայ Չերնօգորիայի հետ և շուտով հաղորդակցութիւնը կը տարածուի ամբողջ Բալկանեան թերակղզու վրայ: Ապագայում աւելի նշանաւոր պէտք է լինի Պիգայի կայարանը, որը կը միացնի Իտալիան Արգենտինայի

հետ: Այժմ արդէն միայն Միջերկրական ծովի եւրոպական ափերում կան 80 անթել հեռագրի կայարաններ: Մարկոնիի սխտեմը գործադրուած է նոյնպէս համբուրգ-ամերիկական շոգենաւերի վրայ և Կոնգոում: Անթել հեռագրատան համար ծառայողներ պատրաստելու նպատակով Իտալիայում շուտով կը բացուի մի ուսումնարան:

\*

Վերջին ժամանակներս պղնձի թանգութեան պատճառով շատ երկրներում սկսել են էլեկտրական հաղորդիչներ պատրաստել ալումինիումից: Չնայած որ վերջինի էլեկտրահաղորդականութիւնը 1,88 անգամ աւելի պակաս է, քան պղնձինը, բայց ալումինիումը 3,3 անգամ պղնձից աւելի թեթեւ լինելով քաշով՝ աւելի քիչ է գործածուած: Բացի այդ՝ նրա թեթեւութիւնը ունի այն առաւելութիւնը, որ չի պահանջուած այնպիսի հաստ և ամուր սիւներ, ինչպէս մինչև այժմ էին գործածուած:

\*

Մայիս ամսին Լոնդոնում պ. Ստեղի խմբագրութեամբ լոյս կը տեսնի մի ընդարձակ աշխատութիւն Ճապոնիայի մասին, որի մէջ մասնակցում են միմիայն ճապոնացի բարձրատիճան անձեր:—Բարոն Սաննոմիա, պետական տան նախագահը, կը գրի կայսերական տոհմի մասին. մարկիզ Իտո՝ կոնստիտուցիայի մասին, բարոն Կանեկո-Կենտարո՝ պարլամենտական կեանքի մասին, ադմիրալ Սաիտո, ծովային նախարարի օգնականը՝ նաւատորմի մասին, գրաֆ Օկումա՝ ժողովրդական կրթութեան մասին, Սալատանի, Ֆինանսների նախարարի օգնականը՝ ֆինանսների մասին կայն: